ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№___62-Ա_____ « 09 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի Հ.1608-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտաապետության և քաղաքաշինության վարչության 14.11.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2013 թվականի ապրիլի 11-ի «Երևանի Վարուժանի փողոցի հ.1/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Մարգարիտ Սիրեկանի Հովսեփյանի իրավունքները վերականգնելու, 210.75քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.1608-Ա որոշման /այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում և 2-րդ կետում «210.75» թիվը փոխարինել «223.21» թվով,

2) Որոշման նախաբանում և 1-ին կետում «510.75» թիվը փոխարինել «523.21» թվով,

3) Որոշման 3-րդ կետում «քաղաքապետի գլխավոր խորհրդական Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ